

« 24 » հունիս 2025թ, No 3785 - Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ
ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2025 թվականի մայիսի 14-ի N 29 և 2025 թվականի մայիսի 22-ի N 34 որոշումները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև հատուկ տնտեսական միջոցների կիրառման պատճառով հանրապետության դեղագործական շուկայում դեղերի բացակայության վտանգի առաջացման պայմաններում դեղերի անխափան շրջանառությունն ու հասանելիությունն ապահովելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մարդու օգտագործման այն դեղերի համար, որոնց գրանցման հավաստագրերը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն տրամադրվել են մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ, սակայն այդ նույն ժամանակահատվածում Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) ռեֆերենտ երկրում ներկայացվել են նաև գրանցման փաստաթղթերը ԵԱՏՄ կանոններին համապատասխանեցման հայտեր՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 78 որոշմամբ սահմանված բժշկական կիրառման դեղամիջոցների գրանցման և փորձաքննության կանոնների XIII բաժնի համաձայն, գրանցման հավաստագրերի գործողության ժամկետները 2026 թվականի հունվարի 1-ից վերահաշվարկել՝ ըստ ստորև սահմանված ժամկետների.

1) մինչև փորձաքննության ավարտը, բայց ոչ ավել քան 3 տարի, եթե ռեֆերենտ երկիր է Հայաստանի Հանրապետությունը.

2) մինչև Հայաստանի Հանրապետությունում փոխադարձ ճանաչման նպատակով փորձաքննության ավարտը, բայց ոչ ավել քան 2 տարի, եթե ռեֆերենտ երկիրը է այլ ԵԱՏՄ անդամ պետություն, և համապատասխանեցման

գործընթացը ավարտվել է, իսկ Հայաստանի Հանրապետությունը նշված է հայտում, որպես ճանաչող երկիր:

3) մինչև Հայաստանի Հանրապետությունում փոխադարձ ճանաչման նպատակով փորձաքննության ավարտը, բայց ոչ ավել քան 5 տարի, եթե ռեֆերենտ երկիր է ԵԱՏՄ այլ անդամ պետություն, և 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համապատասխանեցումը չի ավարտվել, իսկ Հայաստանի Հանրապետությունը նշված է հայտում, որպես ճանաչող երկիր:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն գրանցված մարդու օգտագործման այն դեղերի գրանցման հավաստագրերը, որոնց գրանցման փաստաթղթերը ԵԱՏՄ կանոններին համապատասխանեցման հայտերը մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ չեն ներկայացվել, գործողության մեջ պահել մինչև հավաստագրերում նշված ժամկետների ավարտը՝ առանց հետգրանցումային փոփոխությունների կամ վերագրանցման կամ հավաստագրի ժամկետի երկարաձգման կամ ԵԱՏՄ կանոններին համապատասխանեցման հայտեր ներկայացնելու հնարավորության:

3. Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղդյանին՝

1) ապահովել համապատասխան նշումների կատարումը գրանցամատյանում՝ հիմք ընդունելով 1-ին կետով սահմանված ժամկետները՝ առանց գրանցման հավաստագրերը վերաձևակերպելու:

2) սույն հրամանի մասին իրազեկել դեղերի պետական գրանցման հայտատուներին:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Վարդանուշ Գրիգորյանին:

24.06.2025

X 

ԱՆԱՅԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ